

Կ.Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ-գրականագետ Ա.Խանյանի ստեղծագործությունը արդի հայ պոեզիայի արցախյան հատվածի ինքնատիպ էջերից է: Ընթերցող հասարակությանը նա հայտնի է մեկ ու կես տասնյակ բանաստեղծական ժողովածուներով, որ պարբերաբար լույս են տեսել «Կարկաչ», «Սիրտս ձեզ հետ է», «Լեռների երգը», «Կարոտի կրակներ», «Արցախյան դողաճներ», «Իմ ծիածանը» և այլ խորագրերով: Բանաստեղծի համար արտակարգ բեղուն ու ընդգրկուն են եղել 20-րդ դարի վերջին երկու տասնամյակները: Նա երգել է իր ժողովրդի հերոսական անցյալը և այդ անցյալից ճամփորդություն կատարել դեպի մարտնչող ներկան ու լուսավոր ապագան: Արցախի ազգային ազատագրական պայքարի տարիներին նա հավատ ու հույս է ներշնչել «հազար ու մի դավ և փորձանք» տեսած հայրենակիցներին, ոգևորել նրանց ձեռքբերումներով ու վերելքներով: Նա 1988-ին տառապել է ու դառնացել բնության կողմից մատուցված արհավիրքի համար, դրան հակադրել մայր ժողովրդի ապրելու և արարելու կամքը, հիացել փորձություններին դիմակայելու նրա անսպառ ուժով, հոգեկան կորովով, անընկճելի ոգով: Արցունքի միջից հավատով տրոփող սրտով բանաստեղծը դիմել է.

Իմ մայր ժողովուրդ,

Քո կամքի ուժով ապրել ես դարեր,

Կապրես և հիմա:

Ա.Խանյանը տարիների ընթացքում անընդհատ խորացրել է ստեղծագործական իր մախասիրությունները, հարստացրել ասելիքն ու կատարելագործել բանաստեղծական արվեստը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի արտահայտչական հնարավորություններից՝ խոսքին հաղորդելով մաքուր ու լուսավոր երանգներ: Այդ երևույթը ժամանակին նկատել է արձակագիր Մկրտիչ Արմենը: Գրախոսելով Ա.Խանյանի «Սիրտս ձեզ հետ է» գրքույկը, ականավոր գրողը ընդգծել է. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը... Հանելի է կարդալ Սոկրատին, որի մոտ այնքան արև կա և լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ և ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մոռալ է ընդհանուր

որամաղդությունը, այլև, դրա հետ սերտորեն կապված համեմատություններն ու բառային մատերիալը” (“Գրական Աղբյուր” ամսագիր, 1966թ. N 5):

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում լայնորեն օգտագործվում են կրկնությունները, որոնցով արտահայտվում են հատկանիշի աստիճանականություն, բազմակիություն, հուզականություն, մտքերի խմաստային խորություն: Կրկնությունները ստեղծվում են տարբեր մակարդակներում ու տարբեր չափերով: Նրա բանաստեղծական խոսքին բնորոշ են բառերի, բառակապակցությունների կրկնությունները.

Երեք գլխարկ տեսանք այնտեղ,

Երեք սև թուղթ - երեք ցավ,

Երեք որդու կորուստն ահեղ

Մեր սրտերին ծանրացավ:

(“Այրող հուշ”)

Այս բանաստեղծությունը ծնված է մեր բարի տատիկների հիշատակին, որոնք տեսել են Հայրենական Մեծ պատերազմի սարսափները, խորապես տառապել իրենց որդիների կորստի ցավից: Հեղինակը երեք հատկանշական թվականի կրկնությամբ րնդգծել է երևույթի ծանրությունը և ստեղծել հոգեկան ապրումների, անսփուփ կսկիծների ու վշտահար տրամադրությունների ցնցող պատկեր:

Խանյանի բանաստեղծությունները հարուստ են տարբեր ձևի ու կառուցվածքի կրկնություններով: Գործածության հաճախակցությամբ գերազանցում են վերջակրկնությունները (անաֆորներ) ու սկզբնակրկնությունները (էպիֆորներ).

Աշխարհը լավ,

Աստղերը լավ,

Երգը լավ,

Ծիծաղը լավ,

Երթը լավ,

Լավի տենչով, լավի սիրով քեզ գտա,

Լավին փարված, կյանքի գիրկը ես մտա:

Բանաստեղծը կապակցությունը նույնությամբ չի կրկնում, փոփոխում է լավ բառի առարկայական հատկանիշները՝ ուժեղացնելով բանաստեղծական խոհալմաստային երանգները, այն դարձնում լավ/պատկերավորման ամբողջական հիմք:

Հեղինակային ոճի անհատականացման խոստում չափանիշներից են կրկնավոր բառերի մի այլ փունջ, որոնք կազմում են կրկնավոր բարդություններ: Կրկնավորները վաղուց ի վեր հաստով են բանավոր խոսակցական լեզվին, ուստի նման միջոցները առատությունը հավաստում է Խանյանի խորը կապվածությունը ժողովրդական մտածողությանը:

Նրա պոեզիան հարուստ է կրկնավոր բարդությունների ամենաբազմազան ձևերով: Դրանք արտահայտված են տարբեր խոսքի մասերով և ունեն տարբեր շարահյուսական կիրառություններ: Թվարկենք որոշ կրկնավորներ՝ *մասունք – մասունք, կուտակ–կուտակ, կամաց–կամաց, կարիկ–կարիկ, երամ–երամ, շերտ–շերտ, երանգ–երանգ, փունջ–փունջ, պես–պես, ուրախ–ուրախ* և այլն:

Բանաստեղծը արտահայտչականությունը ուժեղացնելու նպատակով օգտագործում է բավականին հարադրությունների՝ անվանական և բայական, հակադրություններ, որոնք ավելի են ամբողջացնում երևույթների իրական արտահայտությունը տեսնելու, զգալու, վերլուծելու գաղափարը: Նախադասության մեջ կատարում են միևնույն պաշտոնները դառնում բազմակի անդամներ: Ահա մի քանի օրինակներ. *երազ–սեր, աստղ–մարդ, մարդ–աստված, արև–հրաշք, ցուրտ ու տապ, կոպիտ ու նուրբ, սեր–արև, ծառան ու զավակը* և այլն:

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում թարմ ու դիպուկ մակդիրները, գեղեցիկ, հյութեղ փոխաբերություններն ու համեմատությունները միաձույլ ու անվերջ շղթա են կազմում, որոնք գործածության բազմազանությամբ արտացոլում են հեղինակի բանաստեղծական բառապաշարի ճոխությունն ու շքեղությունը: Նրա օգտագործած մակդիրները բանաստեղծական խոսքը դարձնում են պատկերավոր, ներգործուն, գեղեցիկ ու տարողունակ, մտքերին հաղորդում են նոր լիցք, ստիպում ընթերցողին հրճվել ու հիանալ, խորհել ու մտածել: Այսպես՝ *աստղոտ տանիք, կապույտ երազ, ոսկեկամար երկինք, արևային փառք, ժայռեղեն կուրծք, ճերմակ կանչեր, հավերժ բարախուն խարույկներ, ոսկե ալիք* և այլն:

Ս. Խանյանի պոեզիայում ուրույն տեղ ունեն համեմատությունները, որոնք իրենց հերթին հարստացնում են հեղինակի արտահայտման բանաստեղծական միջոցները, նոր լույսով բացահայտում նրա ինքնատիպությունը:

Քիրսա սարը հավերժական զանգի նման,
Ղողանջում էր պապիս հոգում...

(“Պապս”)

կամ

Ջրերիդ նման անվերջ հոսեցի
Քո սրտի միջով...

(“Ջրույց Հայաստանի հետ”)

կամ

Թող ցորենվեմ՝ միայն ոսկե հաշանի տակ
Թե մոլորվեմ՝ ինչպես սալում արևն ամմար:

(“Իմ սուրբ օջախ”)

կամ

Արևն ահա մայր է մտնում,
Ինքն իրենից գոհ է այնպես.
Փայփայել է հողագունդը
Օջախ ու տուն պահող մոր պես:

(“Արևն ահա...”)

Ս. Խանյանի պոեզիան այժի է ընկնում անձնավորում - փոխաբերություններով:
Առարկաներին վերագրվում են այնպիսի գործողություններ, որոնք իրականում նրանց
հատուկ չեն: Նման դեպքերում բայ- ստորոգյալները գործածվում են ոչ թե սովորական,
ուղղակի իմաստով, այլ փոխաբերաբար:

Ամպերը հալչում են,
Ջրերը կանչում են,
Լեռները ժպտում են,
Վազերը լացում են:

Հեղինակը ստեղծել է գարնան անզուգական պատկեր՝ գարնանային շնչով ու
բույրերով լի:

Բանաստեղծի լեզվամտածողության մախասիրած միջոց է համարվում երևույթների,
առարկաների քնութագրությունը բառակապակցություններով արտահայտելը: Դրանք
խոսքը դարձնում են դիպուկ, պատկերավոր և ավելի ներգործուն: “Իմ օրորոց”
բանաստեղծությունը մի սրտառու էրգ է՝ ձոնված մայրիկին, որի էության ու գաղափարի

բացահայտման առանցքը օրորոցն է: Վերջին բառատողը բանաստեղծի կողմից կարծես հարցադրում- բողոք է օրորոցին, որը չի կարող շրջել կյանքի անիվը, հետ բերել բանաստեղծի մանկությունն ու մայր մտած մահացած մայրիկին:

Դու չես կարող, օրորոց իմ,
Մանուկ դարձնել ինձ կրկին,
Այն, չես կարող դու ետ բերել
Իմ մայր մտած մայրիկին...

(“Օրորոց իմ”)

Ս. Խանյանի բանաստեղծություններից շատերն ավարտվում են ասացվածքային ընդհանրացումներով: Մ. Կոլոյունը այդ կապակցությամբ դեռևս 1963-ին գրել է. “Ս. Խանյանը բանաստեղծական մի լավ սովորության է հետևում. աշխատում է իր բանաստեղծությունն ավարտել աֆորիստիկ տողերով, հակիրճ ու ավարտուն մտքով” (“Գրական Աղյուսակ”, 1963, N 6):

Դրա հետաքրքիր վկայություններից են.

Թող ծովերը հար ծփան,
Մեր Սևանն էլ նրանց մեջ:

(“Սևան”)

կամ

Ով չի հասկացել, թող որ իմանա,
Որ գեղեցկուհի մայր ունեցողը
Միշտ էլ հերոսի պատիվ կունենա...

(“Արցախ”)

կամ

Ավյունս կարող է քնել,
Արյունս չի քնում երբեք:

(“Կրծքիս տակ”)

Ես իմ աչքերի լույսը տվել եմ
Աշխարհի խղճին,
Աշխարհի խիղճը էլ չի կուրանա.

(“Աշխարհի խիղճը”)

կամ

Քանի դու կաս իմ կրծքի տակ,

Կյանքն ինձ համար աստղոտ գետ է:

(“Դու...”)

Ս.Խանյանը, օժտված լինելով ժողովրդական մտածողությամբ, ուշադրություն է դարձրել ժողովրդական շեշտ ունեցող բառերի առատ գործածությանը: Դրանք նոր շուր ու քարնություն են տալիս հեղինակի բանաստեղծական մտածողությանն ու երևակայությանը: Ահա մի քանի արտահայտություններ՝ *հանդ ու չոլեր, օճորք, կծախաշ, խաշամ, պատառ, տուտ, ճաք, օջախ, շամանդաղ, կանուխ, շափաղ, ջրատված* և այլն:

Ս. Խանյանի բանաստեղծությունները գերծ են պաճուճանքներից, գունագեղությունից, բայց բխում են սրտից, ջերմ ու քնքուշ են, շաղխված բարու, կարոտի, սիրտ ու լույսի թրթիռներով: Տեղին է հիշել մեծանուն երգիծաբան Հ. Պարոնյանի դիպուկ խոսքը. “Ամենեն գեղեցիկ զարդը անզարդությունն է”:

Ս. Խանյանի գեղագիական կողմնորոշումը խոսքի սեփական բույրը, համը, գույնը պահելու մեջ է: Հեղինակը համոզված է, որ արարումներով անցած ճանապարհին գտել է ինքն իրեն:

Ես հաստատ գիտեմ, անվանն իմ բարի

Մոռացման փոշին երբեք չի չորի,

Երգիս տվեցի շունչը իմ դարի,

Հայրենի հողին՝ իմ սիրտն ու հոգին:

Красота языкового своеобразия

К.А.Акопян

Резюме

Статья посвящена изучению языковых средств произведений поэта —литературоведа С.Ханяна — автора 15 сборников стихотворений и поэм. В своих произведениях поэт умело использовал выразительные возможности армянского языка, обогащая свою речь чистыми и светлыми оттенками. Это явление в поэзии С.Ханяна в своё время заметил знаменитый писатель Мкртич Армен. В поэзии С.Ханяна использованы эпитеты, повторы, сопоставления, метафоры, сравнения, которые показывают его лексическое богатство. Поэтическое мышление С.Ханяна близко к народному, поэтому в его стихах встречаются выражения, звучащие как пословицы.

The Fineness of the Linguistic Originality

K. A. Hacopian
Summary

The article is dedicated to the study of the linguistic means, used in the works of the poet and literary critic Socrat Khanian. He is the author of 15 collections of poems and verses. In his poems he used expressive means of the Armenian language, which enriched his poetry with pure and light nuances. His verses are full of epithets, repetitions, similes, metaphors. This phenomenon was noted by the famous writer Mkrteech Armen. Khanian's poetical thinking is close to the Armenian folklore in his poems we find many expressions sounding like proverbs.